ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԼԵՈՆ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

73 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, Վրացական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Լեոն Մելիքսեթի Մելիքսեթ-Բեկը: Մեռավ Անդրկովկասի նշանավոր աղբյուրագետը, պատմաբանն ու հնագետը, հայ-վրացական բանասիրության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

Ավելի քան 50 տարի պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը հետախուզում, հայտնաբերում և հրապարակում էր հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների պատմական անցյալի նոր էջեր, այդ ժողովուրդների պատմական ու ստեղծագործական կյանքի զուգադիպումները և ընդհանրությունները, նրանց եղբայ-

ության, փոխադարձ ըմբռնման, սերտ կապերի և սրտակից հարաբերությունների նոր դրվագներ: Առանձնապես խոր և ընդարձակ են հայ-վրացական պատմական և կուլտուրական կապերի ուսումնասիրությունները, որոնց ամփոփումն ու գլուխգործոցը դարձավ Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրներ՝ հայերի մասին» բառահատոր աշխատությունը: Բազմաթիվ են Լ. Մելիքսեթ-Բեկի ուսումնասիրությունները ու հոդվածները նվիրված հայ և ռուս ժողովուրդների հնագույն կապերին: Վրացական բանասիրության, պատմության և հնագիտության խնդիրներին նվիրված նրա բազմաթիվ ուսումնասիրություններից չենք կարող չհիշատակել «Մեգալիտյան կուլտուրան Վրաստանում» հետազոտությունը, որտեղ հանրագումարի բերելով իր պրպտումները, անվանի գիտնականը հայտնաբերում է կիկլոպյան կառուցվածքներ և մենհիր-վիշապներ վրացական տերիտորիայի վրա, ցուցադրելով Վրաստանի մշակույթի ընդհանրությունը Հայաստանի «վիշապյան» շրջանի կուլտուրայի հետ: Նրա աշխատությունները մեծ չափով կօգնեն մեզ նոր հետազոտություններ, նոր ընդարձակ աշխատություններ ստեղծելու, անցյալի արժեքները հայտնաբերելու, գնահատելու և ժողովրդականացնելու գործում:

Ժրաջան պրպտող, անշահախնդիր հետազոտող և գնահատող, գիտության հարցերի լուծմանը անկանխակալ ձեռնարկող, ժողովուրդների փոխադարձ սիրո անդուլ պրոպագանդող էր պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը: Նա ուրիշների աշխատությունները կարդում էր ու գնահատում, վերլուծում և որակում՝ իրև անող կարդերի մեծ բարեկամ: Ավելի քան 60 դիսերտացիայի գնահատական է տվել նա, հանդես գալով իրև ընդդիմախոս: Մեր խոշոր գիտնականներից շատերին աստիճաններ բաշխելու գործում մասնակից է եղել, պատրաստել է հայագետներ Հայաստանի և Վրաստանի համար, ուսուցանել է շուրջ 50 տարի ու պատրաստել մտավոր աշխատանքի հարյուրավոր մշակներ: Անհանգիստ, անդուլ աշխատանքով, գիտական բուռն որոնումներով, ուսուցանելով ու գնահատելով, օգնելով ու բարձրացնելով հեռավորին ու մերձավորին, ապրեց պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը և մեռավ, բողնելով գիտության ազնիվ մշակի, գիտության աշխատավորի, ազնիվ ու անշահախնդիր բարեկամի և ժողովուրդների բարեկամության մեծ ջատագովի անուն:

Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

Ա. ՂԱՐԻԲՅԱՆ